Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Дубл.
Or. A. IV. 1. 160

ՓԱԹՆԱԿԷՍ.

# „200000"

Վօդըվիլ մէկ արարուածով

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Բարեփոխած.)

ԳԻՆՆ Է 40 Կ.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ

Տպարան Սանոյեանի եւ Ստեփանեանի.

1903

891.99
Փ-24

арм.
-2743ə
1.99
-24
3-27
13 APR 2011

ՓԱՌՈՆԱԿԷՍ.

# „200000“

Վօդըվիլ մէկ արարուածով

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
(Բարեփոխած.)

ԳԻՆՆ Է 40 Կ.

Инв. № 22366

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Սանոյեանի եւ Ստեփանեանի.
1903

APR 20

Дозволено Цензурою. Тифлисъ, 1 Августа 1902 года.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ им. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
39881-63

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Թաթոս Պլուզեանց, չքաւոր ծառայող . . . . . . . 35 տարեկան
Մարգարիտ, նրա կինը. . . . . 30 „
Գասպար Տուզեանց, բարեգործ. ընկերութեան նախագահ . . . . 50 „
Տիկին Նուարդ Սոքանազեան, կանանց բարեգործական ընկերութեան նախագահ . 45 „
Պօղոս Մանուկեանց, հայ դպրոցի հոգաբարձու . . . . . . 40 „
Մահտեսի Յակովբ, եկեղեց. երեցփոխան 60 „
Գալօ, Թաթոսի ծառան . . . 18 „

*Անցքը պատահում է մի հայաբնակ քաղաքում։*

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

# ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. *Թաթոս.*—Հագնում է ծառայողի գծուծ ու մաշուած շորեր. ինքը չափից դուրս նիհար ու դեղնած երեսով, պարապելիս գործ է ածում ակնոց։ Կրում է բարակ ձեռնափայտ։

2. *Մարգարիտ.*—Գլուխը կապում է ճակատանոցով, ունի ճակատին փիրուզի հասարակ քորոց, հագնում է թէև մաքուր, բայց չիթ շրջազգեստ։

3. *Գասպար Տոուզեան.*—Ցիլինդրով, հաստափոր, հագնում է ֆրակ, իրեն վայել հաստ ձեռնափայտով։ Ունի ձեռնոց։ Խօսում է ընդհատ-ընդհատ։

4. *Տիկին Նուարդ Ասքանազեան.*—Հագնում է շատ ճաշակով, եւրոպական շրջազգեստ վերջին տարազով, գլուխը բաց, գեղեցիկ գլխարկով, երեսին քօղ ունի, որ ներս մտնելիս վեր է առնում, ձեռքին միշտ շղթայակապ կաշուէ պայուսակ փողի համար, գործ է ածում երկայն ձեռնոցներ ու հովանոց, կրում է կարճ, ուլունքազարդ վերարկու։

5. *Պօղոս Մանուկեան.*—Երբեմն դասընկեր Թաթոսի, բայց այժմ վաճառական. հագնում է մաքուր և եւրոպական սև շորեր։

6. *Մանտասի Ցակոբը.*—Համարեայ զուրկ մազերից, ծածկում է բուխարի փափախը և հագնում է սև կաբայ։ Ներս մտնելիս փափախը հանում դնում է սեղանի վըրայ, ձեռքից տէրողորմեան վեր չէ ձգում, քաշում է քթախոտ և գործ է ածում հաստ ձեռնափայտ։ Խօսակցութեան մէջ *սիրական* խօսքը շատ է գործ ածում անտեղի, ինքը շատ անհամբեր և բարկացկոտ։

7. *Գալօ.*—Գիւղացի խամ ծառայ, հագնում է ձեռագործ շալից չուխա և հասարակ ոտնաման ;(չուստ, մաշիկ, կամ եամանի), որ ներս գալիս՝ հանում է՝ իսկ գլխին արախչին։

Къ представленію разрѣшается 25 Окт. 1891 года. Тифлисъ.



# „200000“.

## ՎՕԴԸՎԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

Տեսարանը ներկայացնում է անզարդ սենեակ. մէկ պատի մօտ հասարակ գրասեղան, վրան թըղթեր ու մատեաններ. նոյն սեղանի պատին կըպցրած է պատի օրացոյց, ամսաթիւը ցոյց է տալիս Յունվարի 5-ը։ Միջից ու կողքերից մի մի դուռը, մի քանի աթոռներ և մի տախտ։

### ՏԵՍԻԼ Ա.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ԹԱԹՈՍ (*վերջինս սեղանի մօտ նստած գրում է, իսկ Մարգարիտը թեյադրում։*)

ՄԱՐԳԱՐԻՏ

Գրիր. մի գրուանքայ խաւիար։

ԹԱԹՈՍ

(*Գրելով*) Մի գրուանքայ խաւիար։

ՄԱՐԳԱՐԻՏ

Վեց գրուանքայ թազա ձուկ։

ԹԱԹՈՍ

(*Գրելով*) Վեց գրուանքայ թազա ձուկ, բայց թանկ է հա... իմացած կենաս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Վնաս չունի դու գրիր… երկու հատ չամահի…

ԹԱԹՈՍ

(Գրելով) Երկու հատ չամահի… մէկը խորովես՝ լաւ կըլինի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հա՛, լաւ, գիտեմ, որ շատ ես սիրում… գրիր…

ԹԱԹՈՍ.

Բա՛ս, ինչպէս չէ, լուսահոգի Մաթոս պապս չամահին բերանումը չը մեռա՛ւ։ (Նրան) Է՞լ…

ՄԱՐԳԱՐԻՏ

Էլ ոչինչ չեմ ուզում։ Արաղն ու գինին էլ դու գիտես։

ԹԱԹՈՍ

(Կողմը) Փառք Աստծոյ։ (Նրան) շատ լաւ ես անում, որ էլ բան չես ուզում… չէ՞ մէկ, էլի ուզէիր։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ասենք, որ ուզեմ էլ՝ մեղք չէ։ Յունվարի 5-ն է՝ Թաթախման օր. շատ մարդ էսպիսի բաներով ամեն օր է թաթախւում։ Ամբողջ տարուան մէջ մէկ երկու անգամ էլ թող մենք թաթախուենք, ինչ կը լինի. մէկ էլ որ՝ վաղը բոլոր ընկերներդ կը գան ջրօրհնէքը շնորհաւորելու, բաս էդ ազիզ օրը մի պատառ հաց չըլինի՞ տանը, որ ուտեն։

ԹԱԹՈՍ

Դու էլ ես դրուստն ասում, կաց մի արաղն ու գինին էլ գրեմ (գրում է)։ Է՜հ, չորս վաղյմի, ինչու պէտք է փողս շատ չը լինէր, որ սրտիս ուզածով բոլ-բոլ ծախսէի։ Ախր ծառայողի փող է, է՜, չես իմանում ինչ է գալիս և ուր է



գնում։ Մեր ռոճիկը որ կայ՝ խատակ ուղտի պոչ է, ոչ երկարում է՝ ոչ կարճանում։ Մի ամիս որ մի քիչ շատ ես ծախս անում, մի օր ոտքդ որ եօրղանիցդ մի քիչ աւելի ես ձգում՝ սաղ տարին հաշիւներդ թարսւում, ծռւում են, էլ ծէրը ծէրին չես կարում հասցնի, ա՜յ կորուի էսպէս ապրուստը հա՜…

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, լաւ, շատ մի պանդատուիր, ինչդ է պակաս… ինձ նման կնիկ ունեցողն էլ դարդ կանի՞։

ԹԱԹՈՍ

(Կողմը) Ընհը՜… հէնց էդ էր պակաս. (Նրան) դրուստ որ է…

ՄԱՐԳԱՐԻՏ

Բաս չէ՞ ու սուտ եմ ասում։ Մէկն էլ կը գտնես ինձ նման, չէ՞։ Ամսական 25 մանէթ շատ մարդի կնիկ հէնց մենակ շորի է տալիս, իսկ դու էդքան ռոճիկով սաղ տուն ես պահում, էլի շնորհակալ չե՞ս…

ԹԱԹՈՍ

Գիտեմ, գիտեմ, Մարգարիտ ջան, գիտեմ, որ լաւ ես, ամեն բանում գովական ես՝ բայց իմ քոռ բաղդից՝ մէկ բանը վատ է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչը…

ԹԱԹՈՍ

Է՜, լաւ, թող մնայ խօսքը տակը՝ քարը վրէն։

ՄԱՐԳԱՐԻՏ

Չէ՛, ասա տեսնեմ, ինչն է վատ.

ԹԱԹՈՍ

Էլ ի՞նչ ասեմ, հազար անգամ լսած կը լինիս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Որ որդի չունե՞նք...

ԹԱԹՈՍ

Հա՜... հենց էդ։ Ա՜խ Մարգարիտ ջան, մի սիրուն տղայ որ ունենայինք ինչ է, էլ քէֆիս քէֆ չէր հասնի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ը՜հ, խելքիդ աղ անեմ. մուկն, ասած է, իր ծակը չէր կարում մտնի՝ ցախաւելն էլ պոչիցը կապեցին։

ԹԱԹՈՍ

Շնորհակալ եմ, մուկ չէինք եղել՝ մուկն էլ դառանք... լաւ կոմպլիմէնտ է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Առածն անխօսելի է, Թաթօս ջան, մի՛ նեղանայ. դեռ շատ ջահել ենք. Աստուած ողորմած է, էն էլ կլինի։ Պսակ-ուելիս քու կոպէկ չունէիր, պարտքով հարսանիք արիր, իսկ հիմի, փառք Աստծոյ, եօթ տարուց յետոյ պարտքդ էլ ես տուել և մի վիգրիշնի բիլէթ էլ ես առել։ Պէտք է ես էլ ուրիշ կնիկների նման զուգուող, զարդարուող լինէի, քեզ պարտքի տակ գցէի՝ որ նոր խելքդ գլուխդ գար։

ԹԱԹՈՍ

Չէ, դու խելօք ես։

ՄԱՐԳԱՐԻՏ

Իհարկէ խելօք եմ, խելօքը գլխին հօ պոզեր չի ունենայ, քանի որդի չունինք՝ էդ բիլեթը մեզ որդի։ Կարծում ես՝ աշխատիր մեծացնել—երկու չինել, երկուսը՝ երեք, երեքը՝ չորս



չորսը՝ հինգ, հինգը՝ վեց...

ԹԱԹՈՍ

(Խօսքը կտրելով եւ շարունակելով) Վեցը՝ եօթը, եօթը, ութը, ութը, ինը, ինը՝ տասը... էդ ինչն էր, հաւի ճըտեր են՝ որ շատացնես։

ՄԱՐԳԱՐԻՏ

Բաս ինչ ես ասում։

ԹԱԹՈՍ

Կաց, Մարգարիտ, հանաքը գէնը, էս օր Յունվարի 5-ն է, ամսի 2-ին մեր բիլէթի խաղալու օրն էր. հիմի որ 200,000 մեզ ընկած լինէր...

ՄԱՐԳԱՐԻՏ

Համ տղայ էր, համ էլ աղջիկ, չէ՞...

ԹԱԹՈՍ

Էլ խօսք կա՞յ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Համա ինչ լազաթին ջրօրհնէք կանէինք է...

ԹԱԹՈՍ

Տօ մէնակ ջրօրհնէ՞ք... ջրօրհնէք էլ, զատիկ էլ, նոր տարի ու բարեկենդան էլ, մեծ պաս էլ, բոլորը իրար կը խառնէինք, հալա մեռլոցն ու տնօրհնէքն էլ վրէն աւելցրու։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հէ՜յ գլխի բաղդ, ո՞րտեղ ես...

ԹԱԹՈՍ

Տօ, ինձ բաղդն ով է տուել, էն էլ ծառայողին։ Մեր բաղդը գիտես ո՞րն է. մի օր մէկ էլ տեսար շլընքակոթիս

տուլին ու զուլլուլից վօն արին, դէհ, գնա ու սոված գկռտա, ջրից հանած ձկան պէս բերանդ էնքան բաց ու խուփ արա, որ բալքի թէ մէկը վրէդ խղճայ ու փոխանակ քեզ տապակելու կամ խաշելու՝ կրկին ջրի մէջ գցի, որ ապրես, թէ չէ՝ բաղդ ես ասում որ ինչ, բաղդը մեզ համար չի ստեղծուած։

ՄԱՐԳԱՐԻՏ

Կա՛ց, կա՛ց, էլի մի սկսիլ պառաւ տատի պէս գանգատուիլ։ Լսիր քեզ մի բան ասեմ։ Ասենք թէ էս անգամ քու բիլէթը 10,000 մանէթ է տարել, ինչ կանես։

ԹԱԹՈՍ

Ո՞նց թէ 10,000, 10,000-ն ինչ է որ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Թող լինի 25,000...

ԹԱԹՈՍ

Էլի ոչի՛նչ...

ՄԱՐԳԱՐԻՏ

(Հեգնաբար) Ի հարկէ ոչինչ, քո ողորմած հօրդ հայրդ 25,000-ը համարելով մեռաւ։ Լաւ, թող 40,000 լինի։

ԹԱԹՈՍ

Տօ, բան ասա որ բան դառնայ։

ՄԱՐԳԱՐԻՏ

(Կողմը) Այ աչքածակ մարդ. Նրան) Էդ էլ չես ուզում դէհ թող 75,000 լինի։

ԹԱԹՈՍ

Է՜է... ինչի՞. լեզուդ կը պապանձուի, որ 200,000 ասես։



ՄԱՐԳԱՐԻՏ

Քո փայը քիչ չի լինի յետո՜յ...

ԹԱԹՈՍ

Ի հարկէ, մի բան որ նիսիա է, հազիր շատ ուզեմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Լա՛ւ, 200,000-ը քեզ փէշքաշ. ասա տեսնեմ ինչ կանես։

ԹԱԹՈՍ

(Մտածելով), Ի՞նչ կանեմ... (յանկարծ), ամենից առաջ կը պժուիմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

(Բարձր) Այ բարաքեալլա...

ԹԱԹՈՍ

(Շարունակելով) Յետոյ...

ՄԱՐԳԱՐԻՏ

(Ընդմիջելով) Յետոյ՝ էլ մի շարունակիր, ինձ գիժ մարդ հարկաւոր չէ։

ԹԱԹՈՍ

Այ խելօք, դու կարծում ես էն ժամանակ ինձ էլ քեզ պէս խելօք կինը հարկաւոր կը լինի, ախր ինձ հետ դու էլ կը պժուես։

ՄԱՐԳԱՐԻՏ

Չէ, ես պժուելու ժամանակ չունիմ։

ԹԱԹՈՍ

Տօ, ես շա՛տ ժամանակ ունիմ։ Ուզենք չուզենք՝ պիտի պժուենք, էլի։ Ախր էդքան փող տեսնողը խելօք կը մնայ. էլ ինչ

գժութիւն ասես, որ չանի։ Ամօթ էլ է, որ չանի. հիմի դու ինձ ասա մէկ տեսնեմ, ո՞ր շատ փող ունեցողն է խելօք, հաւատայ որ բոլորն էլ գիժ են, патентованный գիժ։ Չէնց մարդ պիտի գժանոցում ձեռք ու ոտքը կապած նստի, որ նրան նոր գիժ ասեն... իմ ասած գիժ-խելօքները գժերի գիժն են։ Տօ՛, ասած է, «հայի փողը որ շատանայ՝ տան պատերն աչքին ծուռ կերևան։»

ՄԱՐԳԱՐԻՏ

Դու ինձ էն ասա, 200,000-ը որ քեզ ընկնի՝ ինչ բարերարութիւններ կանես, խօսքը դրա մէջն է։

ԹԱԹՈՍ

Հա՛, ա՛յ, ինչ կասեմ։ Ո՞ւր է, թող մէկ ընկնի՝ էն վախտը տես. քանի որ չը կայ ինչ ասեմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Է՛լի...

ԹԱԹՈՍ.

Էլին ո՞րն է, ես հօ գիժ խելօքների պէս չեմ անելու։ Այ, տես. ամենից առաջ մի որբանոց կը հիմնեմ թէ աղջիկների և թէ տղաների համար, անունն էլ կը դնեմ Թաթոս Մարգարեան որբանոց։

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետո՞յ...

ԹԱԹՈՍ

Կա՛ց, որբանոցի մէջ կը բանամ առանձին առանձին ուսումնարաններ երկու սեռի համար էլ։ Ուսումնարանից աւարտելուց յետոյ նրանց կուղարկեմ արտասահման։

ՄԱՐԳԱՐԻՏ

Որ ինչ անեն...



ԹԱԹՈՍ

Որ տղաները օրինաւոր արհեստներ, իսկ աղջիկները կանոնաւոր տանտիկնութիւն սովորեն։

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետոյ էլ իրար առնեն, էնպէս չի՞։

ԹԱԹՈՍ

Ը՜հ, դու էլ եանի թէ մտածեցիր, խելօք բան ասացիր էլի. ես ինչ գիտեմ. էդ իրանց կամքն է, կուզեն կառնեն՝ կուզեն՝ չէ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ.. յետո՞յ...

ԹԱԹՈՍ

Յետոյ էլ կօգնեմ մեր քաղաքի թէ կանանց և թէ տղայոց բարեգործական ընկերութիւններին, ուսումնարաններին, եկեղեցիներին, ամեն տարի մեր որբանոցի աղջիկներից երեք հոգու օժիտ տալով մարդու կըտամ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, երանի՜ չմեռնէի և էդ օրը տեսնէի։

ԹԱԹՈՍ

Համբերիր, դեռ չեմ պրծել։ Մեր լրագրներից ամեն մինին տարեկան կը տայի մի խոշոր գումար, որ ապահով հրատարակուէին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, ինչքան լաւ բան կը լինէր. բաս խեղճ ուսանողների՞ն։

ԹԱԹՈՍ

Տօ, ուսանողներին էլ՝ ամենքին էլ, ով որ ինձ կը դիմէր։

ՄԱՐԳԱՐԻՏ

Եարաբ Աստուած մեր սիրտը չի կարդո՞ւմ։

ԹԱԹՈՍ

Շատ էլ կարդում է, բայց ալքատին ո՞վ է տուել արքայութիւն, փողը միշտ փողի մօտ է հաւաքւում. մենք ո՞ւր, 200,000-ն ո՞ւր։ Է՜հ, էլի եղածների յետեից ընկայ, գործս մոռացայ. գնամ բազար, զախուսկեղէնն առնեմ, տեսնենք ինչ ենք էս ամիս պարտքի տակից դուրս գալու։

ՄԱՐԳԱՐԻՏ

Գնա՛, գնա՛, Աստուած ողորմած է։ Գալօն էլ գա՛յ։

ԹԱԹՈՍ

Բա՛ս, գայ, որ առածներս բերի՜ է...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ախր տանն էլ գործ ունի։

ԹԱԹՈՍ

Լա՛ւ, թող նա իր բանին կենայ, ես կուղարկեմ։ Իրիկունս ինչ ես պատրաստելու։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ձուկն ու փլաւ, հերիք չի՞...

ԹԱԹՈՍ

Կէս էլ առել է, պէհ, ես գնում եմ (*գնում է*)։

---

## ՏԵՍԻԼ Բ.

ՄԱՐԳԱՐԻՏ *միայն*

Խե՜ղճ իմ Թաթոս, մեղքս գալիս է, Աստուած է վկայ. գիշեր ցերեկ անդադար տանջւում է։ Էդքան գրել կը լինի,



որ նա է գրում։ Գիշեր ցերեկ աչքերը քոռացնում է ամսական 25 մանէթի համար, բայց մոխելի՞ս մի րոպէում մանէթներ են խարճւում։ Էդ ջահէլ հասակում, գիր գրելիս՝ ակնոց է գնում, աչքերը չեն ջոկում, ինչ անի։ Է՜հ մի կողմից էլ ինչո՞ւ եմ գանգատւում, էլի մենք շատ շատերից լաւ ենք, ո՜յ, հեռու ո՞ւր եմ գնում, մեր Գալօն ձեզ օրինակ, բաս նա մարդ չէ՞, որ ամսական 3 մանէթով է ծառայում, նա հօ փետից կամ քարից չէ՞ շինած։ Փառք Աստծու, մարդս ոչ խաղալ գիտէ, ոչ խմել. խելօք, հնազանդ, մի խօսքով Աստծու պառ։ Տէր Աստուած, Դու առողջ կեանք պարգևես իմ Թաթոսին, էլ ես ուրիշ ոչինչ չեմ ուզում։ Հա՛, խօսքով ընկայ մոռացայ, (*կանչում է*), Գալո՛, ո՜յ Գալօ... Գալօ՛...

---

## ՏԵՍԻԼ Գ.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ԳԱԼՕ

ԳԱԼՕ

Հրամմէ խամբաջի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Քեզ տեսնեմ Գալօ, մինչև ազիզ գալը էս օթախի պօլը էնպէս պլտի սրբես, որ խտակ հայելու նման պսպղայ, շուտ արա, որ էլի շատ գործ ունես անելու։

ԳԱԼՕ

Շատ լաւ, խամբաջի (*ուզում է գնալ*)։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հա՛ կաց տեսնեմ. ազէզ գրա համար երկու չօար ու մեղրամոմ է առել, կախնում է. գնա բեր՝ քեզ ցոյց տամ։ Եկուց ջրօրհնէք է, շատ մաքուր պէտք է սրբես. (*Գալօն*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ Арм.ССР
им. А. Мясникяна

գնում է)։ Ցաւ ու կրակ է հիմի սրան սովորցնելը, մինչև կօշիկ սրբելը սովորցրի՝ հօգիս դուրս եկաւ։ Ջաա-խամ տղայ է ողորմելին. գիւղից նոր է դուրս եկել; ինչ է տեսել խեղճը, որ ինչ պահանջես։ Ասած է. «հացը հացարարին տուր՝ մէկն էլ աւելի»։ (Գալօն ներս է մտնում միմիայն մեղրամոմը ձեռքին)։

ԳԱԼՕ

Խանըմաջի, աշխատում շատ ման եկայ, չօտքը չը գտայ, մեղրամոմը բերի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞նց թէ չը գտար. էնտեղ երկու տափակ չօտք չը տեսա՞ր։

ԳԱԼՕ

Թիմարելու չօտքերը, խանըմաջի՞։

ՄԱՐԳԱՐԻՏ

(Կողմը) Աչքս լո՛յս, էս էր պակաս (Նրան). հա՛, հա՛, նրանք են, գնա բեր։

ԳԱԼՕ

Խանըմաջի, աղէն ձի ա աւել ըր…

ՄԱՐԳԱՐԻՏ

Տօ ինչ ձի, ինչ ջորի, քեզ ասում են գնա բեր։

ԳԱԼՕ

Որ ուզում ես՝ էնա կը բերեմ էլի, (կողմը) շատ հեր-սոտն ա… (գնում է)։

ՄԱՐԳԱՐԻՏ

Աղէն կատու, շան անէր՝ մնացել էր ձին։ Ա՜խ, Տէր Աստուած, էրբ կը լինի, որ մենք էլ շէնքով, շնորհքով պօկի



ու ծառայ ունենանք, որ ես էլ մի քիչ ազատ շունչ քաշեմ, թէ չէ՞ էս ինչ է իմ օրը։

ԳԱԼՕ

(Մտնելով չօտքերը ձեռքին)։ Սրանք են, խանըմաջի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հա՛, բեր այստեղ։

ԳԱԼՕ

(Չօտքերը տալով), Սրանք ինչ պէտի անես որ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս րոպէիս կիմանաս. մօտ եկ (մօտենում է Գալօն)։ Սրանք որ կան՝ Գալօ, պօլի չօտքեր են, ինչպէս որ աղիդ կօշիկները վաքսով սևացնում, սրբում ես՝ էնպէս էլ էս պօլը մեղրամոմով պիտի սրբես՝ փայլեցնես։ Առաջ առաջ՝ դանակը կառնես, դանակով մեղրամոմից մի քիչ կը քերես պօլի վրայ, յետոյ էլ էս չօտքերից մէկը կը հագնես մի ոտքիդ՝ իսկ միւսը միւս ոտքիդ և պար գալով կսկսես սրբել, կարճ միջոցից յետոյ պօլը հայելու պէս կը փայլի։ Ասածներս լաւ միտդ պահիր, որ ոչինչ չը մոռանաս. ես գործ ունեմ, շուտով կը գամ տեսնելու։ Դէ՛հ, ապրես, Գալօ, առ չօտքերը և գործդ սկսիր։ Հը՜ը, ասածս հօ կարգին ես անել։

ԳԱԼՕ

(Վստահ) Ո՞նց չէ, խանըմաջի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Դէ՛հ, քեզ տեսնեմ, կօշիկ սրբելու պէս էլի ուշ չը սովրես. (գնում է)։

---

## ՏԵՍԻԼ Գ.

### ԳԱԼՕ, *միայն*

Ի՞նչ ասեմ, (*կրկնում է*). «Առաջ առաջ՝ դանակը կառնես» (*հանում է գրպանից իր դանակը*) էս ասենք՝ դանակը. «դանակով մեղրամոմից մի քիչ կը քերես պօլի վրայ» (*նըստում է պօլի վրայ եւ մեղրամոմը դնելով պօլին՝ դանակով մի քիչ քերում է*), էս էլ քերեցինք, «յետոյ չօտքերից մէկը կը հագնես մի ոտքիդ՝ մէկն էլ մէկել ոտքիդ». կաց հագնենք հալա, տեսնենք ինչ ա դուս գալիս (*նստած տեղը հագնում է*) «և պարգալով կսկսես սրբել». ինչ թէ պարգալով, նստած տեղս ինչ պարգամ, ես թէ չէ պարգելս որն է, ես ինչով սրբեմ ախր: Կաց հալա մի գնամ ասեղ բերեմ. (*վեր է կենում՝ չօտքերը ոտքերից հանում՝ ու դուրս գնալով խանութ յետ է դառնում՝ ասեղը ձեռքին եւ կրկին նստում՝ չօտքերը հագնում է նոյն ձեւով*), դէ հըմի ես նստած ինչ պարգամ, ես ինչ պարգալով պօլը սրբեմ: Էս ինչ օյին բերեց գլխիս խանութչիս տօ... ջհանդամը, հըլա պարգամ տեսնեմ ինչ ա դուրս գալի... (*սկսում է ոտները պարզ եղանակով շարժել ու ասեղով պօլը սրբել*), Հէնց ինչ դժար բան կայ՝ էդ օրհնածը ինձ ա անել տալի, ամառվան երեք ամսէյն են տալի էն էլ մինչիցս են հանում... այ բաէնց աշխատանքի մէջը անիծեմ հըմ, տեսնի պօլ սրբե՞լը... Չէ, էս իմ բանը չի. լաւ էնա՝ փասափուսէս քաշեմ, թէ չէ էդուց մէկէլ օր օճօղքն էլ էսպէս սրբել կը տան, որանք հօ մարդիկ չեն՝ սատանայի ջինս են, (*մեկն է տալիս իր վրայ եւ յանկարծ բարձր ծիծաղում*) հա, հա, հա, էս ինչի նման եմ տօ...

---



## ՏԵՍԻԼ Ե.

### *ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ԳԱԼՕ*

*ՄԱՐԳԱՐԻՏ*

(*Ներս գալով*) Հ՞ը, Գալօ, ինչ արիր, պըծա՞ր թէ չէ (*տեսնելով նրան նստած, շուարած*), ինչու ես նստել:

ԳԱԼՕ

Եա... ինչ թէ ինչ ես նստել. (*Նրան*) սրբում եմ էլի, խանութչի (*սկսում է կրկին շարժել ոտները ու սրբել ասեղով*). էսպէս պօլ սրբել բախի չեմ տեսել, խանութչի:

*ՄԱՐԳԱՐԻՏ*

(*Սաստիկ ծիծաղելով*) Ես էլ եմ նոր տեսնում, Գալօ: Տօ, խեղճ Կիրակոս, էդ ասեմ ինչ է... հա, հա, հա...

ԳԱԼՕ

Ո՞նց թէ, ինչ ա, ասել ա էլի:

*ՄԱՐԳԱՐԻՏ*

Բաս չօտքերն ինչու համար են, հա, հա, հա...

ԳԱԼՕ

Խանութչի, դրուստն ասեմ՝ ես էլ չըգիտեմ ինչու համար են: Դու չասացիր հագիր ոտներիդ. դէ էնա, ես էլ հագել եմ էլի:

*ՄԱՐԳԱՐԻՏ*

Լաւ, ասացի հագիր, հօ չասացի ասեղով ու ձեռքով սրբիր, ոտքերով սրբիր, ոտքերով, տօ յիմար... ոտքերով:

ԳԱԼՕ

(*Գողմը՝ ապշած*) Յիմար ոտքերով... (*Նրան*): Ո՞նց թէ յիմար ոտքերով, խանութչի. ասեղը ախր ոտքով ինչ բռնեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

(*Կողմը*) Տէր Աստուած, Դու ինձ համբերութիւն տաս. տօ, աւելն ու ձեռքը հարկաւոր չեն. որ տեսում եմ ոտքերով պիտի սրբես՝ պիտի սրբես էլի: Կանգնիր, կանգնիր, ողորմելի, կանգնիր (*Գալօն ուզում է հանել չուստերը որ կանգնի*), Թո՛ղ, մի հանիր, այդպէս չուստերով կանգնիր. (*կողմը*), տանջանք է էլի:

ԳԱԼՕ

(*Կողմը*) Նահլաթ քեզ չար սատանայ (*Նրան*) ախր ինչ կանգնեմ, խանըմաջի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Կանգնիր, մի՛ վախենայ, հա, հա, հա...

ԳԱԼՕ

(*Կողմը*) Ինչ անուշ անուշ էլ ծիծաղում ա է: (*Փորձում է կանգնել, բայց չի կարողանում եւ նորից վրայ փռւում է գետնին՝ դէպի Մարգարիտը, որ յետ քաշուելով՝ աւելի թունդ է ծիծաղում*). Հը, էդ էիր ուզում.. էդ էլ քեզ մի վախենայ (*չուստերը հանելով ոտքերից դէն է շպրտում՝ ու կանգնում*), իմ հինգ օրուան հալը տուր խանըմաջի. ես գընում եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞ւր ես գնում, տօ յիմար, հա, հա, հա...

ԳԱԼՕ

Մեր տուն, ա՛ղբ. էս իմ բանը չի, ինչ սուտ խօսեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Կա՛ց, կա՛ց, Գալօ. էդ էլ կը սովորես, շատ հեշտ է, մի վախենայ. հա, հա, հա...



ԳԱԼՕ

(*Կողմը*) Հէնց մի պարապ հուհուում ա սա, տօ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Տուր էստեղ չուստերը: (*Գալօն տալիս է եւ ինքը հագնելով՝ սկսում է սահել*): Հը, տեսնում ես ինչպէս հեշտ է: Դէ առ հիմի էլ դու սրբիր՝ տեսնեմ. շուտ արա, ժամանակ չը կայ:

ԳԱԼՕ

(*Կողմը*) Էս սուրբ Կարապետ, դու ինձ համբերք տաս. (*Հագնում է չուստերը եւ սկսում է մի կերպ սահել, քիչ քիչ վարժուելով*):

ՄԱՐԳԱՐԻՏ

Հը՞, դժուար բան է...

ԳԱԼՕ

Դըբուստ որ հեշտ ա, խանըմաջի: (*Նրան*) Լաւ, լաւ, հիմայ կը սրբեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դէհ, պրծիր, պրծիր, (*գնալով*) հա, հա, հա...

ԳԱԼՕ

(*Մարգարիտի յետեւից*) Ջա՛ն, ջան, ջան. չը կշտացաւ, տօ, ծիծաղելուց: Մինչեւ ամեն բան սովորեմ՝ իմն էլ ինձ կը հանի... (*ծիծաղում է*) հա, հա, հա, խանի պէս ներքամաց՝ մէկ էլ խանն ա, ես ու իմ Աստուած. տես ինչեր ա հնարել է... Հըմի մեր գեղըցիներից մէկը որ ինձ ըսէնց տեսնի ինչ ա՝ բերանը երկու պաղ բաց կը մնայ մ՜յ: Ձէ, ես սրանց կըշտածն հըլա շատ բան կը սովրեմ (*սահելիս քիչ է մնում որ կրկին վայր ընկնի*), եամշ... էլ չես տեսնի, ինչ որ էլաւ՝

Էն էլ հէրիք էր... հա, հա, հա... համա լաւ զըխկացի մյ... բաս խանըմաջաւս ծիծաղ՞ը... հէրսիցս քիչ էր մնում տրաքուիմ։ Ծիծաղելիս հէնց գիտենաս լիքը կուլից կըլթկըլթալի ջուր ըլէր խմելիս... հա, հա, հա... օյին, էր՝ օյին... (*լսվում է ներսից Մարգարտի ձայնը.—«Գալօ, շո՛ւտ արա, շո՛ւտ»*). Գըծայ, խանըմաջի, գըծայ. (*ներս է մտնում Մարգարիտը*)։

---

## ՏԵՍԻԼ Զ.

### ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ԳԱԼՕ

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ է, լաւ. շատախօս բազար, տես այէգ ինչ եղաւ ախր. էդքան ժամանակ է, դեռ ոչինչ չէ ուղարկել, (*կողմը*) տեսնես էլի մի ընկերի ձանկն է ընկել՝ գործը թողել։ Ախ, էդ օրհնածի էլ սովորութիւնը. էլ չի ասում, թէ ես բանի եմ գնացել, հազար մի գործ կայ անելու, հազար մի բան հասցնելու։ (*Գալօյին*) Տօ գէ գնա է...

ԳԱԼՕ

Գնամ ինչ անեմ որ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչ պիտի անես, գնա տես ինչ եղաւ, ու զախուսկեղէնը թէ առել է՝ վեր առ բեր։

ԳԱԼՕ

Լաւ, խանըմաջի, գնամ (*ուզում է գնալ*), գնամ հըմա ինչ բերեմ... էն ինչ ասացիր...

ՄԱՐԳԱՐԻՏ

Քո գործը չէ, ինչ որ կըտայ՝ կը բերես. կա՛ց, չօրերն ու աւելն էլ հետդ տար դուրս։



ԳԱԼՕ

(*Անում է, որ տանի, այդ միջոցին դրսից լսւում է Թաթոսի բարձրաձայն. խառնաշփոթ, ուրախալից աղաղակը ու ոտների ձայնը, այնպէս որ Գալօյի դուրս գնալու ժամանակ դուռը յանկարծ բացւում՝ և Թաթոսը շտապ շտապ ներս գալով երեսով ուժգին դիպչում է Գալօյին, իսկ սա քամակի վերայ փռւում է գետնին. ձեռքի չօրերըն ու աւելը դէս ու դէն են թռչում*)։

---

## ՏԵՍԻԼ Է.

### ԹԱԹՈՍ, ՄԱՐԳԱՐԻՏ, ԳԱԼՕ

ՄԱՐԳԱՐԻՏ

Կամաց, կամաց, ինչ խաբար է, խեղճ տղայի գլուխը ջարդեցիր հօ (*Գալօն չօրերն ու աւելը հաւաքելով՝ գլուխը օրօրում, քաշւում է դէպի անկիւնը*)։

ԳԱԼՕ

(*Կողմը*) Էս էլ ձեզ ալէն։

ԹԱԹՈՍ

(*Զլսելով նրանց՝ ներս գալուն պէս հանում է գրպանից լօտգիր և թաշկինակի մէջ ձեռքն առած՝ բռնում է Մարգարտի ձեռքից ու կլոր պարի եղանակով երգելով սկսում է Մարգարտին հետը թռեւ տալով պարգալ*)։

*Մարգարիտ ջան պար արի, (²)*
*Քեզ Թաթոսը մատաղ լինի։ (²)*

ՄԱՐԳԱՐԻՏ

(*Կամենալով ձեռքից ազատուել*), Թաթոս, գժուել ես, ինչ է...

ԹԱԹՈՍ

*(Ձը լսելով ու երգելով)*

Թաթոս ջան, սարդ փոխի, (²)
Կոխած հողդ ոսկի լինի։ (²)

ՄԱՐԳԱՐԻՏ

Ձէ մի քացախ լինի, չի էլ ամաչում։ *(Այս միջոցին Գալօն իր ցաւը մոռանալով սենեկի մի անկիւնում կանգնա[…] ժամանակ ինքն էլ է սկսում պարի եղանակով ծամռուկլ[…] բայց աշխատում է միշտ աննկատելի մնալ Թաթոսից և Մարգարտից)*։

ԹԱԹՈՍ

*(Դարձեալ ձը լսելով շարունակում է երգելը)*։

Ոսկի, արծաթ, գոհար ու զարդ (²)
Իմ Մարգարտիս կուրծքը լցնի։ (²)

ՄԱՐԳԱՐԻՏ

*(Կողմը)* Ձէ, սրան մի բան է պատահել. կարծես խմած լինի. *(Նրան)* Թաթոս ջան, Թաթոս, էս ինչ օյիններ ես հանում։

ԹԱԹՈՍ

*(Կրկին ձը լսելով՝ մտնում բռնում է Գալօյի ձեռքից և նրան էլ պարի մէջ քաշելով դարձեալ երգում է)*։

Օյին, մօյին ես չը գիտեմ (²)
Գալօ, դու էլ թափի տեսնեմ։ (²)

ԳԱԼՕ

*(Խառնուելով խաղի մէջ և կարգին վերվեր թռչելով՝ կողմը)*, Ա՜յ, էս իմ բանն ա։



ՄԱՐԳԱՐԻՏ

*(Ազատուելով Թաթոսի ձեռքից)*, Էդ ինչեր ես անում Թաթոս, ո՞վ է քեզ խելքից հանել. *(Գալօյին)*, դու գործ չունիս այստեղ, դուրս գնա։ *(Գալօն առնում է չոտքերն ու աւելը և դուրս գնում)*։

ԹԱԹՈՍ

Ո՞վ է խելքիցս հանե՜լ… *(ցոյց տալով լրագիրը)*, ա՛յ սա։ Ես քեզ որ ասում էի թէ 200,000-ը մարդու կը զժուեցնի, սուտ էի ասում։ Ձէիր հաւատում. դէհ, հիմի քո աչքերով տես ու հաւատա։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այ մարդ, ինչ ես դուրս տալիս։

ԹԱԹՈՍ

Քանի հազար մանէթ ես ուզում, Մարգարիտ, ձեռաց էս լրագրից թափ տամ քեզ համար։ Դէհ, բեր փէշդ դէմ արա *(շարժում է լրագիրը)* ալէհօպ… ծլպ, ծլպ, ծլպ, ծլպ… տե՛ս, տե՛ս, ինչպէս իրար վրա հարիւրանոցները թափւում են… տօ տատուց, հաւաքիր է՜… Հա, հա, հա…

ՄԱՐԳԱՐԻՏ

*(Կողմը)* Ձէ, սա խսակ զժուել են… այ մարդ, ինչ եղան քու զակուսկէքը։

ԹԱԹՈՍ

Տօ խելօք, զակուսկէս ո՞րն է *(աղաղակելով)* 200,000-ը մեզ է ընկել Մարգարիտ ջա՜ն…

ՄԱՐԳԱՐԻՏ

Դէ, հերիք գլխիցդ դուրս տաս։

ԹԱԹՈՍ

Քեզ բան եմ ասում. էս օր անցեալ փոշտի լրագրում, ա՛յ, հէնց սրանում, որ տեսայ մեզ է ընկել՝ ուրախութիւնից էլ ոտքի վրա չը կարացի կանգնել։ Տե՛ս (*ցոյց տալով լրագիրը՝ կարդում է*). «Յունվարի 2-ին առաջին փոխառութեան խաղարկութեան ժամանակ տանող գումարները ընկել են հետեւեալ համարներին, 10464/₃₄ տոմսակը տարել է 200,000 ռուբլի»։

ՄԱՐԳԱՐԻՏ

(*Ապշած*) Ի՞նչ ես ասում, Թաթօս, էդ հօ մեր համարն է։

ԹԱԹՈՍ

Բա՛ս, քէֆ արա քէֆ... դէ արի հիմի մի իշտահալի պարպանք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Կա՛ց, կա՛ց, մէկ ես էլ տեսնեմ (*առնում է լրագիրը, եւ քիչ յետոյ բարձրաձայն ծիծաղում*) հա, հա, հա, իսկ և իսկ էն է, սիրտս թփթփում է... գլուխս պտտւում... վայ, վայ... աչքերս մթնեց, Թաթօս ջան, ինչ անեմ։

ԹԱԹՈՍ

Ջուր խմի, ջուր... թէ չէ կը պժուխս... շատ մի ուրախանայ... հէրօրհնած 200,000 է էլի, հօ մի մեծ բան չէ. կարծես խելքի փողի երես չես տեսել։ Էսօր պիտի բազարում տեսնէիր թէ, ինչ օյիններ էի հանում. ամբողջ քաղաքը թամաշայ էր կանգնել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Վո՛ւյ, քոռանամ ես, չէիր ամաչում, չէիր կարող ծածկել։

ԹԱԹՈՍ

Ինչու որ, հօ գողութիւն չեմ արել. հէնց որ լսեցին՝



ամէն կողմից սկսեցին ինձ Թաթօս աղա կանչել. էն որ առաջ խելքի զնաղա Թաթօս էլ չէին ասում։ Հայ գիտի փող, ինչ հունար ես ունեցել է։ Վայ ես դրա ստեղծողի ոտքի տակը սատկիմ—մատաղ լինիմ, անջախ մի ձեռքս ինկաւ տօ, ծվվէ...

ՄԱՐԳԱՐԻՏ

ԴԷհ մնացդ բեր խոստմունքներդ։

ԹԱԹՈՍ

Հա՛, դեռ ժամանակ շատ կայ, էդ թողնենք. միթէ ամէն խոստմունք պիտի կատարել։ Լսիր, Մարգարիտ, կարծես իմ նաչալնիկս էլ է իմացել. ախր ինչպէ՞ս բան արի որ չիմանայ։ Գժուածի պէս որ տուն էի վազում, հեռուից մէկին աչքս ինկաւ ու յետեւիցս մի քանի անգամ կանչեց. «Поздравляю Татосъ Матвѣевичъ», հենց նրա ձայնն էր կարծես. էլ չիմացայ թէ ով էր. «Благодарю» գոռացի ու վազեցի դէպի տուն։

ՄԱՐԳԱՐԻՏ

Օրհնա՛ծ, մի կանգնէիր ու տեսնէիր...

ԹԱԹՈՍ.

Է՞հ, բան չունիս, լա՛ւ, էդ թողնենք. դու տես թէ քեզ համար հիմի ինչեր եմ առնելու, հէնց էս ՚սհաթիս կերթամ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Դեռ ոչինչ չես առե՞լ...

ԹԱԹՈՍ

Խելք մնաց գլխիս, որ առնէի...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛ռ, բայց պարտքի տակ չընկնես։

ԹԱԹՈՍ

Տօ, էլ պարտքս մրն է, 200,000-ի առաջ էլ ինչ պարտք կը գիմանայ։ Վաճառականները հէնց լսեցին թէ չէ՝ էլ չէին թողնում՝ որ տուն գամ, հալիւ եմ ձեռքերից փախել, տուն հասել։ Հիմի տես, որ քաղաք գնամ՝ փէշերս պիտի կպտեն, «Թաթոս աղա, համեցէք, մեր դուքանը ձեզ փէշքաշ»։ Ես էլ՝ ի հարկէ, ներս մտնելիս ինձ ծանր ու բարակ պիտի պահեմ, ամէն բանի չեմ հաւատայ ու հաւանի. մի խօսքով, ինչ երկարացնեմ, 1000 մանէթի առուտուր եմ անելու։ Էլ քեզ համար շորեր ու կօշիկներ, գլխարկներ ու զօնտիկներ, հա, լաւ միտքս եկաւ։ Հիմի պէտք է գլուխդ բաց անես, չիքիլէն գէն ձգես. Թաթոս աղի համար ամօթ է, որ նրա կինը գլուխը ծածկած մանգայ. էլ ինձ համար սերթուկ ու մերթուկ, պալտօ, գդակ ու մդակ, թութունաման ու մութունաման, մի խօսքով բան չեմ թողնելու՝ որ չառնեմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Համա ինչ ջրօհնէք կանենք է։ Զախրոսիկըլէն ուելյըրաւ, Թաթոս ջան։

ԹԱԹՈՍ

Տօ, բաներ անենք դու յետոյ տես, Մարգարիտ, երբ փողերը կստանամ ու ծիածանայոյն հարիւրանոցները կսկսեմ համարել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Դրուստ, քանի՞ հարիւրանոց կունենանք, վայ, վայ, վայ...

ԹԱԹՈՍ

Էլ ինչ քանի, թիւ ու համար կայ, որ համարես։ Հա, գիտես, Մարգարիտ, այսուհետեւ քեզ մի քիչ ծանր պահի, որ տեսնողն ասի՝ թէ Թաթոս աղի կնիկն ես։ Խոստովանք պահիր՝ մի քիչ թուխլուխ ես։



ՄԱՐԳԱՐԻՏ

Ըհը՞, սրբանք, ինչ որ չէինք իմացել՝ իմացանք։

ԹԱԹՈՍ

Այսուհետեւ դեռ շատ բան կիմանաս .. դէ լաւ, ականջ մի անի. Գալօյին էլ կասես՝ որ յետոյ էս մեր բոլոր հին աթոռները, սեղանն ու տախտը դուրս տանի, սրանց տեղ հիմի կերթամ՝ նորերը կուղարկեմ։ Ինչպէս հայելիներ եմ առնելու, Մարգարիտ ջան, որ просто կամաչես երեսդ մէջը տեսնելիս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Որ կամաչեմ՝ չեմ ուզում։

ԹԱԹՈՍ

Դէ լաւ, լաւ, շատ մի քըքրւիր, գիտենք, որ Թաթոս աղի կնիկն ես։

---

## ՏԵՍԻԼ Ը.

ՆՐԱՆՔ ԵՒ ԳԱԼՕ

ԳԱԼՕ

(*Ներս վազելով զարմացած*) Աղա, մեր հայաթը էնքան ալքատ է լցուել որ, էլ ինչ ասեմ, ասում եմ էստեղ մեռլատուն չի՝ չեն հաւատում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հա՞... քեզնից խելօք են Գալօ. հալբաթ մեռլատուն չի, հարսանքատուն է, հարսանքատուն. էս ողորմելին բանից խաբար չի, Թաթոս ջան, մի ժամ առաջ, որ էստեղ լինէիր՝ էս գժի արածների վրայ ծիծաղելու կը թուլանայիր... կաց, հի-

մի կը գամ կը պատմեմ. գնանք Գալօ, նրանց ճանապարհ գնենք։ Ա՜յ փառքի՛դ մեռնիմ Աստուած ջան, (դուրս է գնում Գալօյի հետ)։

ԹԱԹՈՍ

(Յետեւից կանչելով), Յօ, ինձ էլ մեռի, ինձ էլ է...

ՄԱՐԳԱՐԻՏ

(Ետ դառնալով՝ դրան միջից), Քեզ էլ, քեզ էլ, Թաթոս ապա ջան (դուրս է գնում)։

---

## ՏԵՍԻԼ Թ.

ԹԱԹՈՍ *մենակ:*

Ա՜յ սատանի յետի կրունկ։ Եարաբ Եւան որ չը լինէր՝ մարդուն ով պիտի խաբէր։ Ափսոս երեխայ չունինք, որ ըլուժանկէք պահինք... Մարգարիտը մեղք է... շատ է չարչարւում... (*ծիծաղելով*), հա, հա, հա, աւաչ աւաչ՝ փալանգուլ Մաթոսի ազայ Թաթոս, կրպակի Թաթոս, Թաթոս Մատվէիչ, Թաթոս ապա, его благородіе, милостивый государь, его высокоблагородіе, его высокородіе... հա, հա, հա, սար ու ձոր, Մասիս—Արագած, Թիֆլիզ—Պետերբուրգ, երկինք ու երկիր։ Երեկ ինչ էի՝ էսօր ինչ. (*առնելով լրագիրը*) ա՜յ ես քու անտարբեր հոգուն մեռնիմ, ոտքիդ տակը սատկիմ (*համբուրում է թերթը*), душка, ուր էիր ախր էդքան ժամանակ, ինչի էիր ուշանում. այ դու բարով հազար բարի եկար, իմ աչքի, իմ գլխի վրայ։ Էս օրհնած լրագիրը երկու օր է ինչ եկել է, բայց ես նոր եմ իմանում։ (*Դրսից լսում է Մարգարիտի խօսելու ձայնը*. „Համեցէք, համեցէք, տանն է“։

---



## ՏԵՍԻԼ Ժ.

ՄԱՐԳԱՐԻՏ, ԹԱԹՈՍ, (*յետոյ*) Տ. ՆՈՒԱՐԴ *եւ* ԳԱՍՊԱՐ

ՄԱՐԳԱՐԻՏ

(*Ներս գալով առանց նրանց*), Թաթոս ջան, Գասպար աղան է—Տուզեանցը և տիկին Նուարդը. ուզում են քեզ տեսնել, շնորհաւորելու են եկել։

ԹԱԹՈՍ.

Լայեղ արին հա՛, հասկանում եմ դրանց փորի ցաւը. Թող գան։

ՄԱՐԳԱՐԻՏ

(*Դուռը բանալով եւ ներս հրաւիրելով*), Համեցէք խնդրեմ, (*տիկին Նուարդը մտնում է հովանոցը ձեռքին, շըղթայակապ պայուսակով. իսկ Տուզեանը փքալով, ցիլինդրով, հաստ ձեռնափայտով եւ մի մատեան կռան տակին։ Նուարդը իր հովանոցը, իսկ Տուզեանը ձեռնափայտը մի փոքր յետոյ դնում են սենեակի անկիւնում, Տուզեանը ցիլինդրը դնում է սեղանի վրայ*)։

Տ. ՆՈՒԱՐԴ

Բարով Ձեզ, պ. Թաթոս, խնդրեմ ծանօթանաք, Նուարդ Ասքանազեան, նախագահ կանանց բարեգործական ընկերութեան. (*ձեռքը մեկնում է Թաթոսին, որ փոխադարձաբար նոյնն է անում*)։

ԹԱԹՈՍ

Շատ ուրախ եմ. Թաթոս Մատվէիչ Պլուզեան... Ձեր խոնարհ ծառայ։

Տ. ՆՈՒԱՐԴ

Ներեցէք, պ. Թաթոս, ձեր հայրանունը ինձ անծանօթ էր։

ԹԱԹՈՍ

Ոչինչ, ոչինչ, ես էլ այսօրուանից է որ յայտնի եմ շատերի համար։

ԳԱՍՊԱՐ

Եւ յաւիտեան յոյս ունինք յայտնի կը մնաք, (*ձեռքը մեկնելով*), Գասպար Տուրգեանց...

ԹԱԹՈՍ

(*Խօսքը կտրելով*) Բարեգործական ընկերութեան նախագահ...

ԳԱՍՊԱՐ

Այո, այո... հըմմ... նախագահ մի շատ աղքատ ընկերութեան։

ԹԱԹՈՍ

Շատ ուրախ եմ. համեցէք, նստէք. (*Մարգարիտը աթոռ է տալիս Նուբարին, իսկ ինքը Գասպարին, չորսն էլ նստում են*)։

Տ. ՆՈՒԲԱՐԴ

Այս րոպէին բաղդ ունեցայ լսելու, Թաթոս Մատթէիչ, Ձեզ հասած երջանկութեան մասին... և իսկոյն պարտք համարեցի շնորհաւորել և ցանկալ ձեզ այսուհետև աւելի երջանիկ և բաղդաւոր կեանք։ Կանանց բարեգործական ընկերութիւնը յոյս ունի, որ դուք, Պ. Թաթոս (*Թաթոսը դէմքը թըթուեցնում է*) կանմահացնէք ձեր անունը, ձեր քաղցր աչքը չը հեռացնելով նոյն ընկերութիւնից։

ԹԱԹՈՍ

Շատ շնորհակալ եմ, տիկին, ձեր բարեմաղթութիւններին համար. (*կողմը*) ալ տեսանես զեգիպտոս։



ՄԱՐԳԱՐԻՏ

Իհարկէ, ամէն մարդ էլ իր կարողութեան չափ պարտաւոր է ձեռքից եկածը չը խնայել այդ համակրելի ընկերութեան օգտի համար։

Տ. ՆՈՒԲԱՐԴ

Մեր ընկերութիւնը յոյս ունի, տիկին, որ ձեր պատուական անունն էլ կը տեսնէ իր պատուաւոր անդամների շարքի մէջ։

ԳԱՍՊԱՐ

Այսօր ձեր շնորհիւ մեր ընկերութիւնն էլ կազատուի վերջապէս մուրացկանութիւնից, գոնէ այդպէս է կարծում ու մտածում մեր ընկերութիւնը։

ԹԱԹՈՍ

(*Կողմը*) Զոր ինչ կարծես կարծիր՝ բայց այդ մի կարծիր։

ԳԱՍՊԱՐ

Ուստի զգում եմ, որ դուք, Թաթոս Մատթէիչ, անշուշտ մի նշանաւոր գումար կը բարեհաճիք նուիրել...

ԹԱԹՈՍ

(*Կողմը*) Հրաժարիմք 'ի սատանայէ։

ԳԱՍՊԱՐ

Դորա համար էլ, ը, ը, ը, հետս առի ընկերութեան նուիրատուութեան մատեանը՝ առաջարկելու այն ձեր քաղցր ուշադրութեանը։

ԹԱԹՈՍ

(*Կողմը*) Եւ յամենայն խաբեութենէ նորա հրաժարելով հրաժարիմք։ (*Նրանց*) Դուք իմ նպատակներիս ծանօթ չէք,

Մարգարիտս գիտէ արդէն։ Ես այժմ անպատրաստ եմ, դեռ ժամանակ չունիմ էդպիսի բաների վրայ մտածելու, բայց, իհարկէ, կը մտածեմ անպատճառ (*կողմը*) թող յուսով սպասեն (*նրանց*) դեռ մտադիր եմ ձեր խորհրդին էլ դիմելու։ Անհոգ եղէք և հանգիստ սրտով գնացէք, շտապելուց ինչ օգուտ, առածն ասում է.—«Тише ѣдешь, дальше будешь». (*Նրանք պատրաստւում են գնալու ու վերցնում են իրանց գլխարկն ու հովանոցը*)։

Տ. ՆՈՒԱՐԴ ԵՒ ԳԱՍՊԱՐ

(*Միասին*) Ուրեմն...

ԹԱԹՈՍ

Ի՞նչ, մի՞թէ ուզում էք գնալ։ Խնդրեմ սպասէք, մի բաժակ կօֆէից յետոյ իրաւունք ունիք. յատուկ խնդրում եմ։ (*Նրանք նստում են*)։

---

## ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՅՆՔ ԳԱԼՕ ԵՒ ՊՕՂՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԳԱԼՕ

(*Ներս գալով*), Ձեզ հարցնող կայ, աղա։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վ է։

ԳԱԼՕ

Չը գիտեմ, խանըմջի։

ԹԱԹՈՍ

Ո՞վ պիտի լինի որ անկոչ մարելս կը լինի էլի... (*ծառային*) ասա թող ներս գայ (*Գալօն դուրս է գնում՝ իսկ ինքը*



*դուռը բանում և տեսնելով Պօղոսին հրաւիրում է*). Օ՜հ... դո՞ւ ես, Պօղոս, էլ հարցնելս ո՞րն է... ներս արի էլի...

ՊՕՂՈՍ

(*Հանաքով*) Չէ, հիմի մեծ մարդ ես, ալբէր, (*համբուրելով*) առանց դակլադի ո՞նց կը լինի։ Ա՜յ քու ուղտը մեր դրանն էլ չոքի, Թաթոս ջան, (*նշմարելով Մարգարիտին*) ներեցէք, քուրիկ, ուրախութեանս չափ չը կայ. յոյս ունիմ, իմ սիրելի Թաթոսը այս երջանիկ օրը կը պսակէ մի ամենանըշանաւոր գործով, որով... (*տեսնելով Նուարդին ու Գասպարին՝ գլուխ է տալիս*). ներեցէք։

ԹԱԹՈՍ

(*Կողմը*) Սա էլ է քացախ խմել, որ իշտահը բաց անի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Իհարկէ, բայց շատ շփոթուած է։

ԹԱԹՈՍ

Ճի՛տ, շի՛տ, խառնուած եմ, կանեմ, մի բան կանեմ անպատճառ։

ՊՕՂՈՍ

Ես էդպէս բան չը գիտեմ, մախաթ եմ ու եախաղ եմ։ Դու լաւ գիտես, որ մեր ուսումնարանը հոգևարքի մէջ է, ողորմութիւնով է ապրում։ Այդ դրութիւնից նրան ազատողը դու պիտի լինիս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուծով, Աստուծով։

ԹԱԹՈՍ

(*Կողմը*) Էս իմ կարած գդալը շատ բոլ բոլ է բռնում (*Մարգարիտին*). Մարգարիտ, ասա էս պատուական հիւրերի համար կօֆէ խնդրեցի։

ՄԱՐԳԱՐԻՏ

*Այս րոպէիս.*

Տ. ՆՈՒԽԱՐԴ

*Ես շատ շնորհակալ եմ օրիորդ, նեղութիւն մի կրէք խնդրեմ։*

ԳԱՍՊԱՐ

*Ես էլ, ես էլ, (վեր են կենում երկուսն էլ)։*

ԹԱԹՈՍ

*Չէ, անկարելի է, կը նեղանամ եթէ չընդունէք։ (Մարգարտին) Շուտ արա, շուտ, օրիորդն ու պ. Գասպարը շտապում են։ (Գասպարին) Խնդրեմ նստէք։ (Նստում են)։*

ՄԱՐԳԱՐԻՏ

*Իսկոյն, իսկոյն. (գնում է, բայց դուռը բանալով չէմքում տեսնում է Մահտեսի Յակոբին)։*

---

## ՏԵՍԻԼ ԺԲ.

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՀՏԵՍԻ ՅԱԿՈԲ

Մ. ՅԱԿՈԲ

*Տանն է աղէն, սիրական։*

ՄԱՐԳԱՐԻՏ

*Տանն է, տանը, համեցէք...*

ԹԱԹՈՍ

*(Կողմը) Ը՜հ՜ը, մէկն էլ եկաւ (տեսնելով նորան) Օ՜... մուխսի Յակոբ, դու ես, բարով հազար բարի եկար (Մարգարտի յետեւից կանչելով) մուխսու համար էլ կօֆէ բեր։*



ՄԱՐԳԱՐԻՏ

*(Դրսից) Կը բերեմ, կը բերեմ։*

ԹԱԹՈՍ

*Իմ աչքի, իմ գլխի վրայ, մուխսի ջան։ Հ՞ը, ի՞նչ կայ, խէր ըլի. մէջքդ քանի գնում էնքան ծռվում է։*

Մ. ՅԱԿՈԲ

*Ինձ էլ, սիրական ջան, որ 200,000-ը դուս գայ՝ (քթախոտը քաշելով) մէջքս կը դզուի, սիրական, (դիմելով Գողորին) էնպէս չի, սիրակա՞ն, կուշտը սոված մանր կը բրդի, սիրական, (քթախոտը քաշելով եւ հրամցնելով Թաթոսին), համեցէք, սիրական։*

ԹԱԹՈՍ

*(Քթախոտը վերցնելով քաշում է) Էդ քանի՞ դուժին սիրական եղաւ։*

Մ. ՅԱԿՈԲ

*Է՜հ, էս հասակիս՝ քանի ուզում է՝ թող լինի, սիրական. դու ինձ էն ասա, սիրական, քանի՞ մանէթ ես տալի սուրբ եկեղեցուն, սիրական։ (Թաթոսը փռշտում է)։ Առողջութիւն, սիրական. առ, առ (տալով մատեանը) դաւթարը, սիրական ու քու աղիզ ձեռքով մէջը գրի, որ հոգիս փառաւորուի, սիրական (Թաթոսը շարունակ փռշտում է)։*

ԹԱԹՈՍ

*Գօղան էլ սիրական, էս օրիորդն էլ սիրական, Գասպար աղէն էլ սիրական, տեսան ու լսեցին սիրական, որ հիմի ժամանակ չունիմ սիրական։*

Տ. ՆՈՒԽԱՐԴ

*Իզուր էք վիրաւորում ծերունուն, Թաթոս Մասմէից։*

ԳԱՍՊԱՐ

*Իհարկէ...*

ՊՕՂՈՍ

*Ոչի՛նչ, չի նեղանայ։*

Մ. ՅԱԿՈՎԲ

*Մասխարայ գցելն էլ նո՛ր ես սովրել, սիրական։ Ես էլ, Պօղոսն էլ, էս տիկինն էլ, Գասպար աղէն էլ, դու էլ, սիրական (քթախոտը քաշելով) հօ շատ լաւ գետենք, որ քեզնից օգուտ չի դուրս գայ, սիրական, կոպէկ չի պոկուի, սիրական (քթախոտը քաշելով), մնաս չարով սիրական, չը վայելես սիրական (փախախը դնում է գլխին եւ մատեանը տալով կոնատակը՝ քթախոտի տուփը դնում է ծոցը եւ դիմում դէպի դուռը)։*

ՊՕՂՈՍ

*(Կողմը) Չէ՛, սիրականը գօւեց (Մահտեսի Յակովբին) Կա՛ց, կա՛ց, մահտեսի Յակովբ, Թաթոսը հանաք էր անում։*

Մ. ՅԱԿՈՎԲ

*Հանա՞քս որն է։ Ես սրա թայն եմ, սիրակա՛ն։*

ՊՕՂՈՍ

*Իհարկէ չէ, նրա հօր տեղն էր... ջահել է, էս անգամ ների՛ր։*

Մ. ՅԱԿՈՎԲ

*(Ետ դառնալով), Ախր, էպրան մարդու մօտ, սիրական, հանաքս ո՞րն է, սիրական (քթախոտի տուփը հանելով ու քաշելով)։*

ԹԱԹՈՍ

*Լաւ, լաւ, մի՛ նեղանար, մահտեսի Յակովբ, նստէք մի մի*



*բաժակ կօֆէ խմենք ու բարիշենք, (դէպի դուռը) ե՛նչ եղա՛ն...*

---

## ՏԵՍԻԼ ԺԳ.

### ՆՈՅՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ԳԱԼՕ

ՄԱՐԳԱՐԻՏ

*(Մի ծրար ձեռքին, իսկ Գալօն մատուցարանով սուրճի բաժակները բռնած՝ ներս են գալիս). Թաթո՛ս, այս նամակը էս րոպէիս ձեր կանցելարեայի ծառան բերեց ու ասաց թէ՝ շատ հարկաւոր նամակ է և պատասխանին է սպասում։ (Հիւրերին) Համեցէք խնդրեմ. (Գալօն մատուցարանը մօտեցնում է հիւրերին առանձին առանձին, իսկ Թաթոսի բաժակը մնում է վրան, որ ծառան ձեռքին պահած՝ քաշվում, կանգնում է պատի տակ)։*

ԹԱԹՈՍ

*(Առնելով ծրարը՝ առանձին). Տեսնես էլի ո՛ր ամաչկոտ սովածն է, որ ողորմութիւն է խնդրում։ Անպատճառ սրանց պէս մէկը կը լինի էլի. ինչ որ սրանք ստացան՝ էն էլ դու կստանաս, ով որ ես. (մօտենում է առաջ, ակնոցը ծոցից հանելով դնում է քթին եւ կարդում հասցէն). «Պարոն Թաթոս Պլուզեանին՝ քաղաքում... (մտածելով) ո՞նց թէ պարոն... պարո՛ն... չէ, սա անպատճառ չիմացողներից կը լինի, տեսնենք ո՛վ է և ինչ է գրում. (ծրարը բանում կարդում է) «Պարոն Թաթոս... (կողմը) էլի պարոն... Ուղարկում եմ ձեզ կարդալու այսօրուան փոշտով այս րոպէիս ստացած լրագիրը, (բաց է անում լրագիրը եւ հարեւանցի տնտղում), կարդալու տեղը կարմիր մատիտով նշան եմ արել։ Ձեր թողած գրագրութեան պաշտօնը շատ խնդրողներ կան, եթէ կրկին ընդունելու միտք չունիք՝ իսկոյն պատասխանեցէք։ Ձեր Կոստանդին Մէզվէզեվ»։ Ի՞նչ է ուզում ասել... պարզ բան է, որ*

չեմ ուզում... տեսնենք ո՞րն է կարդալու բանը, (*բանում է լրագիրը եւ շուռումուռ տալիս, Մարգարիտը մօտենում է, միւսները կանգնում եւ բաժակները ձեռքերին սպասողական դիրք են ընդունում*), որտեղ է կարմիր մատիտի նշանը, (*գտնելով*), ահա, գտայ, (*կարդում է եւ քանի գնում՝ այնքան ձայնը երկարելով եւ դանդաղ*). «Մեր լրագրի անցեալ համարում մի խոշոր սխալ է մտել, առաջին խաղարկութեան 200,000 րուբլին տանող տոմսակի համարն է ոչ թէ 10464/31, այլ 10644/31 «Եմմմ... (*ապշում, բերանը բանում եւ լրագիրը անգիտակցաբար ձեռքից բաց է թողնում*)։

### ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ... (*ուշաթափւում է. տիկին Նուարդը մօտենում, բռնում է նորան*)։

### Մ. ՅԱԿՈՎԲ

(*Մօտենում է եւ ծիծաղելով քթախոտը դէպի քիթը տանում*), Հէ, հէ, հէ, սիրական... նապաստակը փախաւ, սիրական, հէ, հէ, հէ, աւանդ փառացս անցաւորի, սիրական...

### Տ. ՆՈՒԱՐԴ

Խե՜ղճ... (*Պօղոսը եւ Գասպարը նոյնպէս բերանաբաց սառում մնում են*։

### ԳԱԼՕ

(*Որ մենակ կանգնած մատուցարանի վրայ պահում էր Թաթոսի սուրճի բաժակը՝ մօտենում եւ բաժակը դէմ է անում Թաթոսին*). Ղայֆէդ սառեց աղա։

(*Ընդհանուր լռութիւն ու տեսարան*)։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադար
NL0363753

59.778

3-274

## ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Դասագիրք գծագրութեան, (բ. տիպ.) գինն է . . . 50 կոպ
2. Սկզբունք երկրաչափութեան (Դիստերվէգի) . . . . 40 „
3. Վայելչագրութեան դասաւանդութեան եղանակը. . . 20 „
4. Հայկական գեղագրութիւն (գ. տիպ.) . . . . . 30 „
5. Օժանդակ կրթութիւններ գեղագրութեան, . . . . 3 „
6. «Փառնակէս» Գրականական երեկոյ, փոք. մի արար. . 20 „
7. „ 200000, փոք. մի արար. բ. բարեփ. տպագր. 40 „
8. „ Բանաստեղծ, փոք. մի ար. բ. բարեփ. տպագ. 40 „
9. „ «Նիսիա», փոք. մի արարուած . . . . 40 „
10. Уроки Чистописанія для дѣтей . . . . . . 25 „
11. Карта Чистописанія (փոքրատառեր) . . . . . 10 „
12. „ „ (գլխագրեր) . . . . . . 10 „

---

### ՊԱՀԵՍՏՆ Է

Երևան.—Գրավաճառանոց Պետրոս Յովհաննիսեանի
Տփխիս.— „ Կենդրոնական

Գումարով գնողների համար զիջումն կլինի։

*Տպագրութեան համար պատրաստ են.*

1) „Թէ մէկ էլ“.—Ծաղրական պատկեր.
2) „Ակամա ուհի“ փոք. 3 արարուած.
3) Ընտրութիւններ“ կոմ. 3 արար.
4) Новые образцы черченія.

Ծանօթութիւն. Շուտով մամուլին կը յանձնուի „Գրականական երեկոյ“ կերպարանափոխ եղած և երկու արարուածի վերածուած։

---